# Հաղթանակ` կռված արցախցու կամքով



ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի աս տարվա հունվարին սկսված հակահարձակումը նշանավորվեց Չլդրանի և Դրմբոնի ազատագրմամբ, շարունակվեց Հաթերքով և Ջելբաջարով, իր տրամաբանական ավարտին հանգելով Մարտակերտի շրջկենտրոնում: Անցյալ տարվա այս նույն օրերի ծանր դաղթից հետո անպատկերացնելի էր, թե վերստին հայկական շնչով կլցվեն Թարթառի և Խաչենագետի միջև ընկած մի քանի տասնյակ հինավուրց բնակավայրեր: Այն ժամանակ շատերին թվում էր, թե փրկության ելքը Լաչինով փախչել հեռանալն է դեպի օտար վարդագույն հեռաստանները և գաղթականների մի մասը, թեկուզ մորմոքով, սակայն հիասթափված և հուսահատված գնացին և կրվեցին նախկին Խորհրդային հանրապետություններով մեկ, մյուսները ցանկանալով հնարավորին չափ մոտ լինել հայրենի երկրամասին՝ ապաստանեցին մեր հանրապետությունում, իսկ այն սակավաթիվները, որոնցով է սովորաբար գրվում ժողովուրդների պատմությունը, չերկնչելով վտանգներից և ապագա անորոշությունից, դիրքավորվեցին Մարդակերտի վերջին հատվածում: Նրանք նախ կայունացրեցին ռազմաճակատի գիծը, ապա և անցան պատասխան հակահարձակման:

Անկախ միջազգային արտաքին տարբեր գործոնների առկայության, այս հաղթանակը առաջին հերթին հնարավոր դարձավ արցախյան կամքի շնորհիվ: Ի տարբերություն մեր հանրապետության, այնտեղ առաջինը հասկացան, որ փախչելը ելք չէ և թե գաղթականի խարան կրելը կամ փախստականի կարգավիճակ ստանալը չէ փրկության ճանապարհը, որը աշխարհում իրենց ոչ ոք չի կարոտել և ոչ ոք չի սպասում: Այս իրողության գիտակցումից հետո ժողովուրդը արդեն փախչել, հեռանալու փոխարեն սկսեց մտածել իր լեռներում ամրանալու մասին, իսկ ապրելու համար հարկավոր էր կանոնավոր բանակ ունենալ: Դեռևս Շուշիի և Լաչինի արբեցնող հաղթանակի օրերին- շատերն զգում էին, որ ջոկատային պայքարը արդեն սպառել է իրեն, թե ջոկատները կարող են վերածվել մահապարտների հավաքական մի զումարտակի, բայց և պահի ազդեցությամբ կարող են թողնել դիրքերը, այնինչ ընդլայնվող պատերազմը հերոսական խոյանքներից առավել պահանջում էր մարտական կարգապահություն և տրված առաջադրանքների կատարում:

Համընդհանուր զորակոչի հիմքի վրա անցյալ տարվա աշնանը կազմավորվեց ԼՂՀ պաշտպանական բանակը, որը շուտով տարավ մի շարք փայլուն հաղթանակներ: Փորձելով արդարացնել իրենց խայտառակ պարտությունները, ադրբեջանական լրատվական միջոցները սկսեցին հայտարարել, թե Արցախում կռվում են ռուս սպաներ և զինվորներ: Դարեր շարունակ հայրենիք կորցրած ժողովրդի հոգեբանությամբ, դժբախտաբար, մենք ևս չհավատացինք մեր իսկ տարած հաղթանակներին և արցախցի զինվորների սխրանքը փորձեցինք վերագրել այդ լեռնաշխարհում հայտնված ինչ–ինչ միֆական ուժերի:

Արցախի բանակի այսօրվա մարտունակությունը և անօրինակ ուժը, որով հնարավոր դարձան հիշյալ հաղթանակները, բացատրվում է մի քանի պատճառներով: Նախ ղարաբաղցիները այս պատերազմի ընթացքում մեկ անգամ ևս հավաստեցին, որ իրենք իսկապես կռվող ժողովուրդ են և չեն կորցրել իրենց ավանդական այդ հատկանիշը: Հայկական պետականության վերջին կայծերը մինչև անցյալ դարասկիզբը պահպանվել էին հենց Արցախում հանչինս Խամսայի մելիքությունների և հաջորդ կարևոր հանգամանքը Ղարաբաղում չմարած պետականության գիտակցումն և պետական մտածողությունն էր, շնորհիվ որի համեմատաբար կարճ ժամանակում ստեղծվեց ոչ միայն մարտունակ, այլև զարմանալիորեն կարգապահ կանոնավոր բանակ, իսկ լեռնաշխարհի ներսում էլ հաստատվեց ներքին կարգ ու կանոն:

Մարտունակությունն և պետականությունը այս երկու ավանդական հատկանիշներից բացի կարևոր դեր խաղացին նաև արցախյան շարժման դասերը: Մինչ Երևանում քաղաքական տարբեր բանավեճեր էին ընթանում ԼՂՀ կարգավիճակի և քաղաքական հեռանկարների շուրջը, Արցախում հասկացան մի իրողություն, աշխարհից կտրված այս լեռներում չեն կարող գործել միջազգային շատ օրենքներ և այն ինչ կիրառելի է Եվրոպայի սրտում, անիրագործելի կմնա այստեղ և որ փրկությունն ու այս հողում գոյատևելու առաջին նախապայմանը համընդհանուր ինքնապաշտպանությունն է, որի ճեղքումը ռազմաճակատի ցանկացած հատվածում գաղթի ու ավերի է հանգեցնելու հակառակորդի առաջխաղացմամբ գրավված տարածքներում:

Նաև մինչև 1991 թ. վերջը, երբ սկսվեց պատերազմը, ժողովուրդը դեռևս 1989 թվականից պարետատան թողտվությամբ կառավարվող օմոնական բռնությունների օրերից էր հոգեբանորեն պատրաստվել այս ամենին և հասկացել, որ շուտով գալու է զենք վերցնելու և զենք կրելու պահը:

Որքան էլ տարօրինակ կարող է թվալ, սակայն Արցախի զինական հաջողություններին նպաստեց նաև մի քանի տարի ձգվող դաժան շրջափակումը: Այն տեղի ժողովրդին առավել պարփակեց ինքն իր մեջ, ուժեղացրեց տեղայնական հոգեբանությունը` Արցախը դարձնելով հավաքական մի միավոր, միաժամանակ երկրամասը զերծ պահելով նախկին միությունը ողողած արևմտյան շատ արժեքներից, որոնք մեծապես ջնջում էին նաև ազգության գաղափարը, որոշակի բարոյալքություն առաջացնելով նաև Ադրբեջանում, որին երբ գումարվեցին իրենց բանակի պարտությունները, ԼՂՀ սկսվեց աստիճանաբար օտար մի մարմին ընկալվել հարևան հանրապետությունում ու աննկատելիորեն խամրեցին «հայրենի հողից հայերին ոչ մի թիզ չզիջելու» մինչ այդ հնչող ռազմաշունչ կոչերը: Հիմա տեղի է ունենում հետաքրքիր մի բևեռացում. Ադրբեջանում այլևս չեն ցանկանում մեռնել Արցախի համար և սահմանը ընդհանրապես ընկալվում է որպես հեռավոր մի հասկացություն, որից հարկավոր է խույս տալ, իսկ Արցախում հակառակ երևույթն է` երկրամասը վերածվել է հավաքական մի սահմանի և այդ սահմանի յուրաքանչյուր կետի համար պատասխանատվություն են կրում ոչ թե տվյալ սահմանակետին մերձ եղողները, այլև հավաքական արցախահայությունը: Այսինքն հադրութցին սոսկ Հադրութը չի պաշտպանում և ոչ էլ մարտունեցին միայն Մարտունին, այլ տեղի զումարտակները իբրև միասնական բանակի միավորներ անհրաժեշտության դեպքում տեղաբաշխվում են ռազմաճակատի Մարտակերտի կամ Ասկերանի գծի երկայնքով: Վերստին տարօրինակ կարող է թվալ, սակայն այսօրվա հաջողությունների ակունքները հարկավոր է որոնել նաև արցախյան բանակի այն ժամանակվա անբավարար զինվածության և հակառակորդի զինական գերակշռության մեջ: Դեպքերի զարգացումն արցախցիներին պարտադրեց որսորդական հրացաններով կռվել կարաբինների դեմ, այնուհետև կարաբինով ավտոմատի, ապա ավտոմատով գնդացրի, հակատանկային նռնակով ընդառաջ գնալ զրահատեխնիկային, միաժամանակ դիմագրավելով հրետանային հուժկու հարվածներին: Այնուհետև, սակայն երբ ԼՂՀ զինված ուժերը հակառակորդից վերցված զինավարով հետևողականորեն սկսեցին ձեռք բերել ծանր տեխնիկա, զինական միևնույն հարաբերակցության պայմաններում էլ ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ հայերի: Այսօր օգտագործվող զինատեսակներից նրանք միայն օդուժ չունեն, որովհետև հակառակորդից վերցված դիրքերում ինքնաթիռներ և ուղղաթիռներ չկան և ինչպես իրենք են ասում, առայժմ բավականանում են միայն դրանք օդում խփելով:

*Վարդան Դևրիկյան*